ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Գեղագիտական դաստիարակության գործոնը ընտանիքում**

Դասվար՝.....Հարությունյան Փառանձեմ Ռոստոմի

Ղեկավար՝ ..... Շ.Սարգսյան /մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ/

Գյումրի - 2023

Թեմայի անվանումը՝

«Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գեղագիտական դաստիարակության գործում»

Սույն աշխատանքում ներկայացված են ընտանիք և դպրոց համագործակցության դերը գեղագիտական դաստիարակության գործում:

Ժամանակակից աշխարհում ընտանիքը և նրա սոցիալ-տնտեսական բարեկեցությունը համարվում են ամուր պետության և առողջ հասարակության գրավականներ, և դրանով պայմանավորված՝ այսօր գիտական հանրության շրջանում մեծ արդիականություն են վայելում ծնողների մանկավարժական իրազեկման հետ կապված տարատեսակ հիմնահարցերը: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ապա հաղթանակն ապահովված է:

Աշխատանքի առաջին գլխում ուսումնասիրել ենք «Դպրոց–ընտանիք համագործակցության ազդեցությունը կրթության և դաստիարակության արդյունավետության գործում», անդրադարձել ենք ընտանիքի ազդեցությանն երեխայի դաստիարակության գործում, դպրոց-ընտանիք համագործակցությանը և դպրոց-ընտանիք համագործակցության ժամանակակից խնդիրներին կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում:

Երկրորդ գլխում նեկայացրել ենք «Գեղագիտական դաստիարակության դերը դպրոց-ընտանիք համագործակցության գործում», անդրադարձել ենք գեղագիտական դաստիարակության էությանը կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում, կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության առանձնահատկություններին և կատարել ենք սոցիոլոգիական հարցման վերլուծություններ ամփոփումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...……4

ԳԼՈՒԽ I

ԴՊՐՈՑ–ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Ընտանիքի ազդեցությունը երեխայի դաստիարակության գործում……...…….6

1.2 Դպրոց-ընտանիք համագործակցությունը……..10

1.3Դպրոցի և ընտանիքի համագործակցության ժամանակակից խնդիրներն կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում……..…15

ԳԼՈՒԽ II

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

2.1Գեղագիտական դաստիարակության էությունը կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացում…….20

2.2Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում……..…..27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……36

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..38

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում ընտանիքը և նրա սոցիալ-տնտեսական բարեկեցությունը համարվում են ամուր պետության և առողջ հասարակության գրավականներ, և դրանով պայմանավորված՝ այսօր գիտական հանրության շրջանում մեծ արդիականություն են վայելում ծնողների մանկավարժական իրազեկման հետ կապված տարատեսակ հիմնահարցերը: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ապա հաղթանակն ապահովված է: Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Սովորողների հետ աշխատանքը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ են ընտանիքի հետ համագործակցության առկայությունը: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Ավարտական աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել ընտանիք–դպրոց համագործակցության արդյունավետ ձևերը և միջոցները, այդ միջոցների կրառման հնարավորությունները կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործընթացում:

Նպատակն իրականացնելու համար առաջադրված **խնդիրներն** են՝

- Ուսումնասիրել ընտանեկան միջավայրի դերը երեխայի ուսուցման և զարգացման գործընթացում,
- Ուսումնասիրել և ուսուցիչ-ծնող համագործակցության արդյունավետ ուղիներն և նրանց ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործում,
- Ուսումնասիրել գեղագիտական դաստիարակության բովանդակությունը և էությունը տարրական դպրոցում:
- Սոցիոլոգիական հարցումների անցկացում և արդյունքների վերլուծություն:

Աշխատանքի իրականացման համար նախատեսված հետազոտության մեթոդներն են՝ թեմային առնչվող մասնագիտական գիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն, համեմատում, համադրում, սոցիոլոգիական հարցումներ, հարցազրույց, դիտումներ:

Ավարտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը ներկայացված է 48 էջ համակարգչային շարվածքով:

ԳԼՈՒԽ 1

ԴՊՐՈՑ–ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Ընտանիքի ազդեցությունը երեխայի դաստիարակության գործում

Հասարակության զարգացման աստիճանը պայմանավորված է նրա անդամների կրթության աստիճանից և որքան կիրթ են հասարակության անդամներն, այնքան մեծ են նրա զարգացման հնարավորությունները:

«Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ, կազմում նրա անբաժանելի մասը»,-ասել է Վ. Հյուգոն

Սակայն այսօր մեր հասարակության յուրաքանչյուր անհատ կրթության ստացման տարբեր հնարավորություններ ունի և լինում են դեպքեր, երբ վտանգվում է նրա կրթություն ստանալու հնարավորությունը: Իսկ կրթությունն ունենալն այնքանով է կարևոր, որ տեղի է ունենում անձի ձևավորում, սոցիալականացում, հասարակաության մեջ ինտեգրում: Սակայն ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններն իրենց բացասական ազդեցությունն են թողել կրթության դերի և անհրաժեշտության վրա:

Փոխվել է ժամանակներն ու պահանջները, փոխվել է նաև դերեն ու մոտեցումներն կրթության ու դաստիարակության գործին, սակայն դեռ նախկինից մնացած կարծրատիպերը խոչընդոտում են այդ գործընթացների ճիշտ կազմակերպմանը:

Ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդե-սերունդ փոխանցողն ընտանիքն է: Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորույթների, մշակույթի, դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական

առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման, կայացման հարցում: Այստեղ են դրվում երեխայի անձնավորության հիմքերը, և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:[1]

Մեր օրերում սոցիալ-տնտեսական ու արժեմշակութային փոխհարաբերություններն անմիջականորեն ազդում են ընտանիքի վրա՝ նրան դարձնելով այդ փոփոխությունների կրողը: Այսօր առավել քան կարևորվում են մի շարք սոցիալական օղակների, կրթադաստիարակչական համակարգերի սերտ և թափանցիկ համագործակցությունը, որոնց միջև գոյություն ունեցող մանկավարժական ներգործությունների միասնականությունը և անընդհատությունը պետք է կարողանա ապահովել երեխայի լիարժեք զարգացումը:

«Ընտանիք» ինստիտուտի ուղղությամբ հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակների տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային զարգացումները դեռևս շարունակում են էապես ազդել ընտանիքի մոդելի վրա: Այդ իսկ պատճառով՝ մեծանում է ընտանիքի «ռիսկայնության» հավանականությունը:[2]

«Ընտանիք» սոցիալական ինստիտուտում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, նրա մշակութային զարգացումը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով ու վարքագծով, կարևորվում են նրանց արժեքային կողմնորոշումները, որոնք երեխայի համար ընդօրինակման առաջին նմուշներն են: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողն ու ժառանգորդը, որոնց հիման վրա էլ ձևավորվում է նրա աշխարհայացքը: Յուրաքանչյուր արժեք կարող է բնութագրվել որպես հավերժական, բացարձակ և համամարդկային միայն այն դեպքում, երբ կապված է ապագայի հետ և լի է հնարավորություններով:[3]

---

[1] Խոջոյան Լ., Ընտանիք-դպրոց-համագործակցություն, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 1.2017, էջ 56:

[2]«Ընտանիք» ինստիտուտի հետազոտություն, Երևան, 2006:

[3]Աշիկյան Ա., Ընտանիքը երեխայի անձի ձևավորման և զարգացման սոցիալ-մշակութային միջավայր, «Պատմություն և միջավայր» , հայագիտական հանդես, Երևան, 2016, էջ 348:

Երեխաները մեր ապագան են: Սա իրականության հանրահայտ ձևակերպումներից է: Ինչպիսին կլինի մեր ապագան. Սա պայմանավորված է այն իրողությամբ, թե ինչպիսի երեխաներ կկրթենք ու կդաստիարակենք մենք: Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է կատարում ծնող-ուսուցիչ-դպրոց օղակը:[4]

Ընտանիքն այն առաջնային խումբն է, որը վճռական դեր է խաղում իր կազմում զարգացող երեխաների ինքնագիտակցության ծագման ու ձևավորման գործում:

Անառարկելի է, որ երեխայի դաստիրակությունն սկսվում է ընտանիքում: Ընտանիքն է սոցիալականացման առաջնային օղակը, ուր երեխայի սոցիալական էության սկիզբն է դրվում: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորությունը, դաստիրակվում են բարոյական հատկություններ ու սոցիալական վարքագծի հիմքեր: [5]

Ընտանիքը բոլոր ժամանակներում եղել է հասարակության արժեքային համակարգի կրողը և ցուցանիշը: Չնայած նրան, որ պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրել ընտանեկան արժեքների ձևավորման և հասարակության կողմից դրանց ընկալման վրա, միևնույն է, ընտանիքը միշտ էլ համարվել է մարդկության կենսագործունեությունը կարգավորող համամարդկային արժեք: Այնուամենայնիվ, պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր մարդիկ ունեցել են ընտանեկան արժեքների վերաբերյալ տարբեր կողմնորոշումներ: Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, զգայուն է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ այն իր մեջ արտացոլում է տվյալ հասարակության պատկերը և ունի այն բոլոր օրինաչափություններն ու հակասությունները, որոնք հատուկ են այդ հասարակությանը: Ընտանեկան դաստիրակության գլխավոր նպատակը երեխային

[4]Տիգրանյան Լ., Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, «Նախաշավիղ» 4.2012, Գիտամեթոդական հանդես, էջ 59:;

[5] Մանկավարժական ընթերցումներ, «Դպրոցը, մանկապարտեզը և ընտանիքը», Երևան, 1961, էջ 112:

օգնելն է՝ արդյունավետ կառուցելու իր փոխհարաբերությունները շրջապատող աշխարհի հետ և կայանալու որպես անհատականություն:[6]

Որոշ հեղինակների կարծիքով, ընտանիքի՝ որպես սոցիալական ինստիտուտի գործունեությունը պայմանավորված է մարդկության, հասարակության և ազգի պահպանման պահանջմունքով: Ինչպես չկան ազգեր, որոնք չունեն սեփական պատմություն, այնպես էլ չի կարող լինել ընտանիք՝ առանց ուրույն ավանդույթների, նորմերի և արժեքների:[7]

Ընտանիքի մասին ժամանակակից պատկերացումներն այսօր այլ են: Այլ են պատկերացումները ընտանեկան արժեքների և ընտանիքի սոցիալական նորմերի վերաբերյալ: Ժամանակակից կյանքում հաճախ ընտանիքը դիտարկվում է սոսկ որպես երկու անհատների միություն, որտեղ նրանցից յուրաքանչյուրը կարող է բավարարել իր հիմնական պահանջմունքները: Ավանդական-հայրիշխանական ընտանիքներին աստիճանաբար փոխարինելու են գալիս էգալիտար ընտանիքները, որոնց անդամներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:[8]

Այսօր արդեն վերափոխվում են այնպիսի ընտանեկան արժեքները, որոնց հիմքում ընկած է հանրային շահերի առաջնահերթությունը անհատի շահերից: Եթե առաջներում գերիշխող էին համարվում ընտանիքի շահերն ու հետաքրքրությունները, ապա այսօր նախընտրություն են տալիս անհատներին, ինչն էլ, ցավոք սրտի, կարող է հանգեցնել տվյալ անհատի կողմնորոշմանը դեպի արտաընտանեկան արժեքները: Որքան ավելի է ընդունված երեխան իր ծնողների կողմից, այնքան ավելի բարձր է նրա ինքնագնահատականը: Այս ենթադրությունը ստուգվել է ուղղակի հետազոտությունների օգնությամբ:

Ժամանակակից ընտանիքների համար կարևոր է անդամներից յուրաքանչյուրի ազատության և պատասխանատվության արդյունավետ հարաբերակցությունը:

---

[6]Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 205:

[7] Антонов А. И., Медков В.М., Социология семьи, М., 1996, ст 23,,

[8]Մարկոսյան Ն.Ռ., Ժամանակակից ընտանիքների արժեհամակարգը և դրա ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2015, էջ 206:

Ժամանակակից հասարակությունը կարիք ունի առողջ, ապահով և երջանիկ ընտանիքների, սակայն նույն այդ ժամանակակից կյանքն իր բոլոր դրսևորումներով հաճախ բացասական հետք է թողնում բազմաթիվ ընտանիքների վրա: Շատանում են այն ընտանիքները, որոնց մեծահասակ ծնողները մատնված են անուշադրության, միայնակ են կամ բնակվում են ծերանոցներում:

Երեխաների ընդհանուր զարգացումը պայմանավորված է ծնողների կրթական ցենզով և զարգացածության մակարդակով: Սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ կրթված ծնողների ընտանիքներից դուրս են գալիս ապաշնորհ և անկիրթ երեխաներ:

Երեխաների դաստիարակության համար կարևոր է ծնողների ազատ ժամանակի առկայությունը: Սակայն նույնսիկ դրա առկայության պարագայում կարևոր է, թե ծնողները ինչի վրա են այն ծախսում: Ունենալ ազատ ժամանակ դեռևս չի նշանակում տրամադրել այն երեխաների դաստիարակությանը:[9]

Այսպիսով, ժամանակից կյանքում ձևավորվում է ընտանիքի և ընտանեկան դաստիարակության նոր արժեհամակարգ, որը միշտ չէ որ հասարակության բարոյական զարգացումը տանում է ճիշտ ճանապարհով: Ուստի այսօր շատ կարևոր է ճիշտ և օբյեկտիվորեն գնահատել ավանդական ընտանեկան արժեքները, դրանց հետևանքով հասարակության գիտակցության մեջ առաջացած թե բացերը, թե ձեռքբերումները: Անհրաժեշտ է ակտիվ լուսավորչական-դաստիարակչական աշխատանք հատկապես երիտասարդների շրջանում: Այս հիմնախնդիրը պետք է պահել մանկավարժական հանրության մշտական ուշադրության կենտրոնում ու մշակել արդյունավետ ընտանեկան դաստիարակությա նոր ուղիներ:

1.2 Դպրոց-ընտանիք համագործակցությունը

Ընտանեկան դաստիարակության շարունակականության ապահովումն էապես պայմանավորված է դպրոցի աշխատանքով: Դպրոցը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել նրա դերը դաստիարակության հարցում: Ցանկալի է, որ ընտանիքն ու դպրոցն աշխատեն նույն ուղղությամբ: Դպրոցի և

[9]Մարկոսյան Ն.Ռ., Ժամանակակից ընտանիքների արժեհամակարգը և դրա ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 207:

ընտանիքի միջև հակասությունը բացառվում է այս հարցում: Նրանց համագործակցության կենտրոնում երեխան է, որն իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է դպրոցում և ընտանիքում:[10]

Դպրոց-ընտանիք համագործակցությունը մի գործընթաց է, որը չի ավարտվում ուսումնառության այս կամ այն տարում, այլ շարունակական է և ներգրավված կրթադաստիարակչական ամբողջական գործընթացի մեջ, և նրա ապահովումը՝ ժամանակակից պայմաններում դպրոցի, ընտանիքի, հասարակության զարգացման տեսանկյունից կարևորագույն նպատակ է համարվում:[11]

Ընտանիք-դպրոց փոխհարաբերության մեջ կողմերից յուրաքանչյուրը յուրովի պատասխանատվություն է կրում մյուսի հանդեպ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթական վճռորոշ գործոն է, ապա հաղթանակն ապահովված է: Մեծ մանկավարժ Ժան-Ժակ Ռուսոն նկատել է, որ ընտանիքից հետո յուրաքանչյուր դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը:

Ըստ Մակարենկոյի՝ երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ առարկաները, երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և, առաջին հերթին՝ ծնողները: Փոխվել է ուսուցիչ-աշակերտ-ծնող եռանկյունին:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության մեջ առաջնային դերը դպրոցինն է, որովհետև հասարակության կրթական մակարդակի բարձրացումը դպրոցի գործառույթն է: Դպրոցն ու ընտանիքը համագործակցության կայացման գործում պետք է խուսափեն հասարակության մեջ կարծրացած, միմյանց «վերևից նայելու» սովորությունից: Փոխհարաբերությունը պետք է լինի ոչ թե երկու կողմերի համակրանքի կամ հակակրանքի վրա հիմնված, այլ միմիայն ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կայացմանը միտված հտակ ծրագրերի տեսքով: Օրինակ, եթե աշակերտի ծնողը տվյալ առարկայի մասնագետ է և գտնում է, որ կարող է օգտակար լինել դպրոցին իր կազմակերպած

---

[10] Խոջայան Լ., Ընտանիք-դպրոց-համագործակցություն, «Նախաշավիղ», գիտամեթոդական հանդես, 1,2017, էջ 56:

[11] Ղուկասյան Լ.Հ., Դպրոց-ընտանիք համագործակցության ուղիները հանրակրթության պայմաններում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 198:

սեմինարներով, բանավեճերով, ապա պետք է առաջարկի իր օգնությունը: Համագործակցության ընթացքում այս երկու սոցիալական ինստիտուտները ոչ թե պետք է իշխեն, պարտադրեն միմյանց, այլ, ընդհանուր նպատակներ ունենալով, լրացնեն մեկմեկու: Այս հարցի հետ կապված Ս.Մովսիսյանը գտնում է. «Դպրոցը չի կարող է ընտանիքի նկատմամբ հանդես գալ որպես կառավարող: Դպրոցն և ընտանիքն կազմում են սոցիալական միկրոմիջավայրի կառուցվածքի առանձին մասեր, որոնք գտնվում են փոխկապակցության մեջ: Երեխաների դաստիարակության բնագավառում սոցիալական այս համակարգերի հարաբերության հիմնական հատկանիշը նրանց համագործակցությունն է, որը արտահայտվում է փոխադարձ ինֆորմացիայով, համատեղ աշխատանքով և փոխօգնությամբ: Համագործակցության այդ միջոցները ոչ միայն նպաստում են ընտանեկան, այլև դպրոցական դաստիարակության զարգացմանը»:[12]

Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքում, և՛ դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն այդ տեսակետից գերխնդիր է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև գործարար ու նպաստավոր համագործակցության կառուցումը:

Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվել են դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:[13]

Կրթության արդիական մեթոդներն օգնում են, որ երեխան գիտելիքներ ստանա՝ օգտագործելով իր բոլոր ընդունակությունները, ինչպես և վստահություն ձեռք բերի սեփական ուժերի նկատմամբ: Առանց ծնողների օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումը օգնում է ուսուցչին՝ տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս

[12] Մովսիսյան Ս.Ա., Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 1980, էջ 170:
[13]Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացի ուսումնական նյութերի փաթեթ:

կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա: Դա ուսուցչին թույլ է տալիս հասկանալ և օգնել երեխային: Ծնողների ազդեցությունը երեխայի վրա շարունակվում է նաև դպրոցական տարիներին, ինչը ևս պետք է հաշվի առնվի դպրոցական ուսուցման ընթացքում: Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներն են, որոնք ազդում են երեխայի վրա մանկության և պատանեկության տարիներից: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտների մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորուշումը: Ուսուցիչ-ծնող շփման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները՝

1. Խոսակցությունը չսկսել անմիջապես երեխայի հետ կապված հիմնախնդրից:
2. Չշտապել անմիջապես լուծել այն:
3. Հետաքրքրություն ցուցաբերել ծնողի և նրա աշխատանքի նկատմամբ:
4. Քննարկել այն հուզական վիճակները, որոնք առաջ են գալիս դպրոցի, ուսուցիչների, երեխաների պատճառով:
5. Ուշադիր լսել և ընդունել այն, ինչ ասում է ծնողը. Փորձել հասկանալ, թե ինչու է նա այդպես մտածում:
6. Ծնողներին հատկացնել այնքան ժամանակ, ինչքան անհրաժեշտ է տվյալ իրավիճակում:
7. Ծնողներին տեղեկություններ հաղորդել անձամբ և ոչ թե երեխաների կամ երրորդ անձի միջոցով: [14]

Հայտնի է, որ բոլոր ծնողները չէ, որ տիրապետում են երեխայի դաստիարակության ու նախնական ուսուցման նրբություններին, ինչպես նաև մանկավարժական մեթոդներին: Մինչդեռ, ի սկզբանե լինելով առաջին դաստիարակը և ուսուցիչը, ծնողը պարտավոր է ունենալ այդ կարողությունները: Այդ հարցը հիմնավորապես կարգավորվում է ծնող-ուսուցիչ կապի միջոցով. էական է թե ինչպիսին է նրանց մտահոգությունների բնույթը, որոնց առանցքը լինելու է կոնկրետ երեխայի ուսումն ու դաստիարակությունը և ապագա գործուն քաղաքացու

[14]Տիգրանյան Լ., Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, «Նախաշավիղ» 4.2012, Գիտամեթոդական հանդես, էջ 61:

նախադրյալների մշակումը օրեցօր փոփոխվող ու մեծացող մանկան բնավորության մեջ: Ուսուցիչը կապեր հաստատելով աշակերտի ընտանիքի հետ՝ լուծում է հետևյալ խնդիրները՝

1. Ճանաչել երեխայի ընտանիքը:
2. Ուսումնասիրել երխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա:
3. Օգնել ծնողներին՝ ընտանեկան պայմաններում երեխային դաստիարակելու:
4. Կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը:
5. Չեզոքացնել ընտանիքի բացասական ազդեցությունը:[15]

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսով՝ անփոխարինելի է ընտանիք-դպրոց համագործակցության դերն երեխայի ճիշտ դաստիարակության գործընթացում: Ծնողի և ուսուցչի համագործակցության արդյունքում լուծվում են բազմաթիվ խնդիրներ, որոնք էլ հիմք են հանդիսանում կրթված և դաստիարակված սերունդ ունենալու համար:

[15] Ջանիկյան Ս.,Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում, «Նախաշավիղ» 7.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 62:

1.3 Դպրոց և ընտանիք համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում

Ներկայումս առաջնային կարևորություն է ձեռք բերել երեխայի դաստիարակության կազմակերպումը՝ դպրոցի և ընտանիքի սոցիալական գործընկերության հիմքով: Երեխայի դաստիարակության գործում մարդասիրական միջավայրի ստեղծման անհրաժեշտությունն ուսուցիչների և ծնողների առջև նոր խնդիրներ է դնում անհրաժեշտ մանկավարժական գործողությունների ընտրության հարցում: Ընտանիքն ու դպրոցը հավասարապես պատասխանատու և շահագրգիռ են յուրաքանչյուր դպրոցի ու ընդհանրապես կրթության տարածաշրջանային համակարգի աշխատանքի որակի համար:[16]

Երեխայի ուսուցմանը նախապատրաստելու հարցում կարևոր դեր ունեն ոչ միայն դպրոցը, այլև ծնողները, ովքեր նույնպես կարող են և պետք է լուրջ մասնակցություն ունենան այս գործընթացին:[17]

Կրթական համակարգում կատարվող փոփոխությունները և դպրոցի առջև ծառացած խնդիրները պահանջում են վերանայել հարաբերությունները գործընթացի բոլոր մասնակիցների միջև: Հանրակրթական դպրոցը, ինչպես կրթության մյուս մակարդակները,սոցիալական պատվեր է կատարում, և մանկավարժները պետք է լսեն հասարակության ձայնը, իմանան նրա կարծիքը կրթության որակի մասին: Վստահաբար պետք է ասել, որ երեխայի՝ որպես դաստիարակության սուբյեկտի, ձևավորումն առաջին հերթին սկսվում է ընտանիքում:

Հենց ընտանիքում են դրվում նրանց սոցիալականացման և անձնային որակների ձևավորման հիմքերը: Յուրաքանչյուր ընտանիք հասարակության մի մասնիկն է՝ կապերի լայն համակարգով: Ըստ ռուս գիտնական Վ.Ա.Միխեևի՝ այսօր գործում է դպրոցի և ընտանիքի գործընկերության երկու մոդել՝ նախաձեռնողական և ձևական-ստիպողական: Դաստիարակության ոլորտում դպրոցի ամենալավ

[16] Ջանիկյան Ս.,Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում, «Նախաշավիղ» 7.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 46:

[17] Սվաջյան Ա., Ծնողների մասնակցությունը երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստման գործընթացին, «Ընտանիք և դպրոց», Գիտամեթոդական ամսագիր, 4.2010, էջ 19

գործընկերն ընտանիքն է: Սակայն ժամանակակից դպրոցի և ընանիքի միջև շատ հակասություններ կան, այդ թվում՝ դաստիարակության հարցերում: Ուսուցիչները գանգատվում են դպրոցի նկատմամբ ընտանիքի, ծնողները՝ իրենց երեխաների նկատամբ ուսուցիչների կանխակալ, շահադիտական շարժառիթներով պայմանավորված վերաբերմունքից: Ընտանիքի և դպրոցի դաստիարակչական ներուժի միասնականացումը և սոցիալական գործընկերական հարաբերությունների հաստատումը կտան ցանկալի արդյունք:

Ներկա ժամանակահատվածում հասարակությունը դպրոցի առջև նոր խնդիրներ է դնում՝ ծնողների դաստիարակչական ներուժի ճիշտ ու նպատակահարմար օգտագործման և նրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների կառավարման մեջ ներգրավելու առումով: Դա նշանակում է, որ դպրոցը և ընտանիքը պետք է դիտարկել որպես հավասար իրավունքներ ունեցող գործընկերներ, որոնց գործողությունների հիմքում ընկած է փոխադարձ հարգանքն ու վստահությունը: [18]

Տարրական դասարաններում որպես ընտանիքի հետ համագործակցության հիմնական **միջոցներ**, կիրառվում են՝

- Դասարանական ծնողական ժողովներ
- Ծնողների անհատական խորհրդատվության տարբեր ձևերը:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է: Ժամանակի մեծ մտավորականներից մեկն ասել է. «Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. Նա ձևավորում է մարդուն»:[19]

Ծնողների խորհրդատվությունը ժամանակակից դպրոցի ու ընտանիքի համագործակցության ամենաարդիական և պահանջված եղանակն է: Ծնողների մեծամասնությունն ինքնակրթության համար դիմում է հենց դպրոցին: Խորհրդակցության հիմնական նպատակը ծնողի ձգտումն է՝ ավելի խորը և օբյեկտիվ

[18] Ջանիկյան Ս., Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում, ‹‹Նախաշավիղ›› 7.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 49:

[19] Թովմասյան Լ., Ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա, ‹‹Նախաշավիղ›› 5.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 59:

պատկերացում ունենալ իր երեխայի առաջադիմության, վարքագծի հետ կապված խնդիրների մասին, լսելու պրոֆեսիոնալ մանկավարժի դիտարկումներն ու խորհուրդները և ըստ այդմ, առավել որոշակիացնելու կամ շտկելու, վերակազմակերպելու սեփական դաստիրակչական հնարները:

Սակայն կան այլ միջոցներ ևս, որոնք այսօր հազվադեպ են գործադրվում: Դրանցից են՝

- մանավարժական փորձն, փոխանակման համաժողովները,
- ծնողների հետ հարցուպատասխանի երեկոները, դասախոսություններն ու զրույցները,
- դպրոցական կոլեկտիվի և ընտանիքի անդամների հանդիպումները,
- կլոր սեղան-քննարկումները,
- բանավեճերը՝ տարբեր մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, ոստիկաններ և այլն) մասնակցությամբ:

Յ.Ս. Կոմենսիկին նշում է, որ «մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր, արձակուրդ», իսկ «երեխան ընտանիքի հայելին է» սահմանում դարձած արտահայտությունը լիովին ներկայացնում և կարևորում է ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում:

Պոդլասիի կարծիքով՝ ընտանիքի ազդեցությունը հատկապես երեխայի կյանքի նախնական փուլում գերազանցում է և՛ դպրոցի, և՛ ԶԼՄ-ների, և հասարակական կազմակերպությունների, և՛ ընկերկերի, և՛ արվեստի ու գրականության ազդեցությունը: [20]

Դպրոցը, իբրև կրթական միջավայր, պետք է բաց և հասանելի լինի ինչպես ծնողների, այնպես էլ հասարակության համար: Դպրոցի և ընտանիքի համագործակցության համակարգում այսօր հիմնականում կիրառվում են դասարանական և համադասարանական ծնողական ժողովները և ծնողների անհատական խորհրդատվությունը:

[20] Подласый И.П., Педагогика, Москва 2003, ст 224;

Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:

Տարրական դպրոցի ուսուցչի և ծնողների հետ համագործակցությունը կարևոր նախադրյալ ու մանկավարժական պայման է՝ ապահովել ու համար երեխաների դաստիրակությունը և իրականացնելու դպրոցի կրթական նպատակները: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունն արդիական է, քանի որ երեխայի բազմակողմանի դաստիրակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով, որի հիմքում պետք է լինեն վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության և հանդուրժողականության սկզբունքները:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության նպատակը երեխայի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, առօրյա կյանքի խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողությունն որի ձևավորումն է:[21]

Դասվարը ծնողներին կարող է ներգրավել դասարանի դաստիրակչական աշխատանքների կազմակերպման հետևյալ տիպի աշխատանքներում. Երեխաների հայրենասիրական դաստիրակությանը վերաբերող բարոյագիտական խնդիրների քննարկում, մասնակցություն դպրոցական շաբաթօրյակներին, հայրենասիրական բնույթի արտադասարանական միջոցառումների նախապատրաստում և կազմակերպում, թեմատիկ պատի թերթի հրապարակում կամ ազգային-ազատագրական շարժման տարբեր փուլերին նվիրված հայրենասիրական անկյունների, հերոս ազատամարտիկների, հայրենիքի սահմանները հերոսաբար պաշտպանող զինվորների լուսանկարների ցուցահանդեսների ձևավորում և այլն:

Իսկ ինչ վերաբերվում է գեղագիտական կրթությանն ու դաստիարակությանը, կարելի է ասել, որ այն երկարատև պրոցես է, այն սկսվում է ընտանիքում,

[21]Վարդանյան Ռ.Ա., Դպրոց-ընտանիք համագործակցության միջոցները տարրական դպրոցում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 321:

շարունակվում դպրոցում, այնուհետև ամբողջ կյանքում: Այդ շղթայի ամենաարդյունավետ և կառավարելի շրջանը դպրոցական տարիներն են, քանզի դպրոցի միջով է անցնում յուրաքանչյուր քաղաքացի և հասարակությունը կարող է ազդել նրա ձևավորման վրա առողջ հասարակություն ստեղծելու նպատակով, իսկ ընտանիքն էլ իր կարևոր և լուրջ դերակատարումն ունի երեխայի գեղագիտական զարգացման գործում:

Անշուշտ, երեխայի դաստիրակության գործում ընտանիքն ու դպրոցը չեն կարող փոխարինել իրար, սակայն շատ կարևոր է ստեղծել վստահելի, գործընկերային, բովանդակալից ու հուզականորեն հագեցած հարաբերություններ միմյանց հետ՝ համատեղ ու անընդհատ մանկավարժական ներգործությունների միջոցով ապահովելով երեխայի լիարժեք ձևավորումը:[22]

Այսպիսով՝ դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկողմանի ու նպատակասլաց գործընթաց է, այն ունի ընդհանուր նպատակ և պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված: Այդ կապի բարելավման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել ծնողների կարիքները և առաջարկությունները, աշակերտների կրթական պահանջմունքները՝ ստեղծելով կրթադաստիարակչական գործընթացի համար արդիական պայմաններ:

[22]Սիսյան Ս.Բ., Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրտսեր դպրոցականների քաղաքացիական որակների դաստիարակության գործում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2015, էջ 316:

ԳԼՈՒԽ II

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

2.1Գեղագիտական դաստիարակության էությունը կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացում

Հասարակության զարգացման անցումային շրջանի իրավիճակը, սրելով մարդու գոյության իմաստը և աշխարհում նրա տեղը որոնելու գործընթացները, հանգեցնում է կրթության հումանիզացման անհրաժեշտությանը և նախապատվություն է տալիս անհատի գեղարվեստական և գեղագիտական արժեքների զարգացմանը:[23]

Հանրակրթական դպրոցներում, ժամանակակից կրթական միջավայրի պայմաններում, զարգացման և դաստիարակության գործընթացն ապահովում է յուրաքանչյուր աշակերտի ընդգրկումը տարատեսակ գործունեության մեջ, որի իրականացմամբ որոշվում է երեխայի գեղագիտական որակների արդյունավետությունը: Կրտսեր դպրոցական տարիքը անհատի ձևավորման և սոցիալականացման ամենակարևոր փուլն է, որը բնութագրվում է երեխայի՝ շրջապատող աշխարհի գիտելիքների ծանոթությամբ, անկախ մտածողության զարգացմամբ, ճանաչողական հետաքրքրությամբ և հետաքրքրասիրությամբ:[24]

Գեղագիտական կրթությունն դպրոցում ապահովում է կրտսեր դպրոցականների անհատականության գեղագիտական զարգացման դինամիկան, մինչդեռ մի փուլից մյուսի անցումը ոչ միայն քանակական փոփոխությունների արդյունք է, այլև աշակերտի ներքին աշխարհի էական կազմավորում:[25]

---

[23] Сергеева Б.В., Петренко Н.А. Эстетическое воспитание младших школьников // Современные наукоемкие технологии. – 2016. – № 12-2. – С. 428-43:

[24] Рафикова О. С. Педагогическая поддержка развития самостоятельности младших школьников в процессе эстетического воспитания // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 5. С. 167-168:

[25] Пагута Т. И. Система эстетического воспитания младших школьников в современных условиях// Вектор науки ТГУ. Серия Педагогика, психология. 2013. № 2. С. 240-243:

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն՝ aisteticos-զգայությամբ ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18-րդ դարում (գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից), սական որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անքակտելի մասը: Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության (ճանաչողության) հիմնական նպատակներից մեկը: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ:

Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով:[26]

Ժամանակակից գիտատեխնիկական նվաճումները և տեխնոլոգիաների գերարագ զարգացումը, գիտության և տեխնիկայի կողմից մարդու ինքնությանը նետված մարտահրավերներն ավելի ու ավելի հրատապ են դարձնում անձի գեղագիտական զարգացման խնդիրները: Ահա թե ինչու անձի հոգևոր զարգացման և կայացման մեջ գեղագիտական ասպեկտի նշանակալիության արժևորումը դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներից է: Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է անձի զգացմունքային և ինտելեկտուալ ոլորտների ձևավորմանը, հանրության մեջ վարքի և շրջակա աշխարհի հետ նրա համագործակցային հարաբերությունների մշակմանը, անձի ներդաշնակ և բնական սոցիալականացմանը:[27]

---

[26]Միքայելյան Հ., Գեղագիտական դաստիարակությունը և մաթեմատիկական կրթությունը, Մաթեմատիկան դպրոցում, ամսագիր, թիվ 4, 2016, էջ 3:

[27]Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 216:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական կրթության համակարգը ինտեգրված է տարրական ընդհանուր կրթության հիմնական կրթական ծրագրում՝ հաշվի առնելով կրտսեր դպրոցական տարիքի երեխաների տարիքային, հոգեբանական և մանկավարժական առանձնահատկությունները: Կրթության այս ուղղությունը ենթադրում է աշխարհի նկատմամբ գեղարվեստական և ստեղծագործական վերաբերմունքի մոդելի մշակում՝ կրտսեր դպրոցականի տարիքին համապատասխան գործողությունների միջոցով:

Գեղագիտական դաստիարակությունը կրտսեր դպրոցականների ինտեգրալ կրթական գործընթացում մեծ նշանակություն ունի, քանի որ հենց այս տարիքում է, որ առաջատարներից մեկը երեխայի հուզական և զգայական զարգացումն է, որը նպաստում է նրա արտաքին աշխարհի ակտիվ զարգացմանը և շրջապատող մարդկանց հետ հաղորդակցմանը:[28]

Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով ունի նաև գեղագիտական դաստիարակվածություն, կրթվածություն: Գեղեցիկին հաղորդակից լինելով, մարդը հանգիստ է գտնում: Արվեստը օգնում է նրան պայքարել, հաղթել, ցանկացած գործունեության մեջ ոգևորող սկիզբ ներդնել: Գեղագիտական դաստիարակությունը դաստիարակողի ու դաստիարակվողի համատեղ գործունեության գործընթաց է՝ դաստիարակվողների գեղագիտական կուլտուրան ձևավորելու համար:

Գեղագիտական դաստիարակությունը մեկնաբանվում է որպես կիրառական գիտական գիտելիքների և սոցիալական պրակտիկայի ոլորտ, որի հիմնական առարկան անհատականության գեղագիտական զարգացման էության, օրինաչափությունների, ձևերի, եղանակների, միջոցների, գեղագիտական գործունեության ընկալման նրա կարողությունների, ներառյալ՝ ընկալման, բացահայտումն է: [29]

Գեղագիտական դաստիարակությունը ավելի լայն հասկացություն է, քան գեղարվեստական դաստիարակությունը: Վերջինս կազմում է գեղագիտական

---

[28] Сергеева Б.В., Петренко Н.А. Эстетическое воспитание младших школьников // Современные наукоемкие технологии. – 2016. – № 12-2. – С. 428-432:

[29] Волчегорская Е.Ю. Художественно-эстетическое воспитание в начальной школе: лекция / Е.Ю. Волчегорская. – Челябинск: Изд-во Челяб. гос. пед ун-та, 2010. – 53 с. 9:

դաստիարակության կարևորագույն մասը միայն:[30]

Լայն իմաստով գեղագիտական դաստիարակություն ասելով հասկանում են մարդու մեջ իրականության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի նպատակաուղղված ձևավորումը: Գեղեցիկով և գեղեցկության միջոցով դաստիարակությունը ոչ միայն ձևավորում է անձի գեղագիտական-արժեքային կողմնորոշումը, այլև զարգացնում է գեղագիտական արժեքների նկատմամբ նրա առանձնահատուկ վերաբերմունքը ինչպես վարքում և գործողություններում, այդպես նաև աշխատանքային գործունեության բնագավառում և կենցաղում: Գեղագիտորեն դաստիարակված լինելը համարվում է գեղագիտական դաստիարակության նպատակն ու արդյունքը: Այն կարող է դիտարկվել որպես անձի գեղագիտական մշակույթի ձևավորման որակական ցուցիչ, որը համարվում է նրա հոգևոր դաստիարակության բաղադրիչը:[31]

Գեղագիտական դաստիարակությունը չի կարող սահմանափակվել միայն գեղարվեստական կրթությամբ: Այս գործում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գեղեցիկի արվեստը: Գեղարվեստի լավագույն նմուշները նպաստում են մարդկանց գեղեցիկ կարողությունների բացահայտմանը:[32]

Բ.Մ.Նեմենսկին գտնում էր, որ գեղագիտական դաստիարակության էությունը «…կյանքի երևույթների նկատմամբ մարդու վերաբերմունքի մակարդակն է, այն բարձրագույն մակարդակը, երբ ընդհանուր օգուտը և ճշմարտությունը տրանսֆորմացվում են խորապես անձնական, ազատ, անշահախնդիր գեղագիտական վայելքում»:[33]

Գեղագիտական դաստիարակության Էության մեջ դրսևորվում են երեք կողմեր

1.անձի գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները

2.գեղագիտական պատկերացումներն ու դատողությունները

3.գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները

Առանց այդ որակների անձը չի կարող արժեվորել ու գնահատել արվեստի գործերը,

---

[30] Աթայան Ռ.Ա., Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան, 1974, էջ 5:

[31]Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 216:

[32] Педагогика, курс лекций, Ереван 1969г., ст 5:

[33] Неменский Б.М., Мудрость красоты, М., “Просвещение”, 1981, с. 28:

նա չի ունենա գեղագիտական ճաշակ: Սա է պատճառը, որ մարդիկ տարբեր ձևով են ընկալում ու զգում գեղեցիկը: Գեղագիտական դաստիարակությունը օգնում է ձևավորելու նոր մարդու ամբողջական անձնավորությունը՝ իբրև իր բարոյական մտքերավ ազնիվ մարդու, որ կարողանում է տեսնել ու գնահատել գեղեցիկը կյանքում, ամենատարբեր բնույթի գործունեության մեջ, որ պայքարում է հանուն գեղեցկության: Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար: Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է, ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ:

Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:[34]

Գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է բոլոր հասակներում: Եվ ինչքան շուտ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը:

Հանրության մեջ կա այն թյուր կարծիքը, թե հանրակրթական դպրոցում գեղագիտական դաստիարակության խնդիրը պետք է իրականացնել միայն արվեստի կամ էլ առավելագույնը՝ հումանիտար ցիկլի ուսումնական առարկաների միջոցով: Այս կապակցությամբ ժամանակակից ճանաչված ռուս նկարիչ և մանկավարժ Մ. Բ.

[34] Հովսեփյան Վ.Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Երևան, 1979, էջ 20:

Նեմենսկին գրում է. «Գեղագիտական դաստիարակության համակարգը նախ և առաջ պետք է լինի միասնական, միավորի բոլոր առարկաները, արտադասարանական պարապմունքները, դպրոցականի հասարակական ողջ կյանքը, որտեղ պարապմունքի յուրաքանչյուր տեսակ գեղագիտական մշակույթի և անձնավորության ձևավորման գործում ունի իր խնդիրը»:

Գեղագիտական դաստիարակությունն ընդհանուր դաստիարակչական գործընթացում անհամեմատ մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականների համար, քանի որ հենց այդ տարիքային փուլն է հանդիսանում կարևորագույնը երեխայի հուզա-զգայական աշխարհի ձևավորման և զարգացման համար, ինչը նպաստում է արտաքին աշխարհի գեղագիտական յուրացմանը և շրջապատի մարդկանց հետ ներդաշնակ հաղորդակցմանը: Հետևաբար, երեխայի գեղագիտական դաստիարակությունը պետք է սկսել ամենավաղ տարիքից, երբ նա սկսում է աշխարհը տեսնել յուրատեսակ գեղադիտակի միջով՝ իմաստավորելով և հստակ տարանջատելով գեղեցիկը տգեղից, վեհը նսեմից: Գեղագիտական դաստիարակության գործընթացը, պայմանավորված տարիքային զարգացման առանձնահատկություններով, ավելի ինտենսիվ է դառնում կրտսեր դպրոցական տարիքում, երբ մանկան մեջ առավել վառ են դրսևորվում գեղագիտական հասկացությունների վերաբերյալ պատկերացումները: Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը նրանց գեղագիտական իմացության և գեղագիտական գործունեության հիմքերի ձևավորման գործընթացն է՝ որակապես նոր մակարդակով, որը նպաստում է երեխայի՝ գեղեցիկը ընկալելու և զգալու ունակությունից գեղեցիկի օրենքներով ստեղծագործելու ունակության անցմանը:[35]

Տարրական դպրոցում գեղագիտական դաստիարակության գործընթացի ինքնատիպությունը հիմնականում պայմանավորված է կրտսեր դպրոցականների ընդհանուր տարիքային առանձնահատկություններով, որոնք այն հոգեբանական ֆոնն են, որի հիման վրա տեղի է ունենում կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը: Շատ հաճախ «գեղեցկություն» գեղագիտական կատեգորիայի ընկալումը երեխայի մոտ գալիս է մեծահասակի գնահատականների միջոցով, երբ երեխաները պատրաստակամորեն օգտագործում և յուրացնում են ծնողների և

[35] Ներսիսյան Լ. Ս., Կրթություն և գեղագիտություն, Եր., 2002, էջ 48:

ուսուցիչների գեղագիտական դատողությունները:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործընթացում պետք է առաջնորդվել այն փաստով, որ երեխայի երևակայության ստեղծած գեղարվեստական պատկերը միշտ իրավիճակային և սուբյեկտիվ է, առավելապես արժեքավոր է միայն ստեղծագործողի համար, և եթե ստեղծված ապրանքը իրացվում է արտաքինում աշխարհ, ապա դա սովորաբար այնքան էլ կատարյալ չէ: Միևնույն ժամանակ, երեխան տպավորությունները համատեղում է զարմանալի հեշտությամբ:[36] Գեղագիտական դաստիարակության կազմակերպումը տարրական դպրոցում կրում են անհատական և տարբերակված բնույթ: Այն իրականացվում է համատեղ գործունեության միջոցով քանի որ յուրաքանչյուրը ընկալում է ստացված տեղեկատվությունը այլ կերպ:

Առաջին հերթին, հետազոտողները նշում են կրտսեր դպրոցական տարիքում իրականացվող գեղագիտական դաստիարակության գործընթացի առանձնահատուկ արդյունավետությունը: Այսպիսով, Ա.Ա. Մելիք-Փաշաևը և Ն.Ն. Նովլյանսկայան ցույց տվեց, որ, համեմատած այլ տարիքային խմբերի հետ, հենց կրտսեր դպրոցականներն ունեն բարենպաստ նախադրյալներ գեղագիտական զարգացման համար և, ըստ իրենց արդյունքների, ավելի մոտ են արվեստի մասնագիտությունների մեծահասակներին (պրոֆեսիոնալ նկարիչներ, երաժիշտներ, կատարողներ), քան դեռահասներ և մեծահասակները, որոնք ոչ մի կապ չունեն նրանց հետ, գեղարվեստական գործունեության հետ:

Սուխոմլինսկին գրել է, որ մանկության շրջանում զգայունությունը գեղեցկության նկատմամբ անհամեմատ խորն է, քան անհատականության զարգացման հետագա ժամանակահատվածներում: Այն, ինչ բաց է թողել մանկության տարիները, շատ դժվար է, գրեթե անհնար է հասնել հասուն տարիքում: Երեխայի հոգին հավասարապես զգայուն է ինչպես հայրենի բառի, այնպես էլ բնության գեղեցկության և երաժշտական մեղեդու նկատմամբ: Ընտանիքում երեխան բազմիցս հանդիպում է այնպիսի միջոցների, ինչպիսիք են պապիկ տատիկների երգած երգերը, Ամանորին, Տյառնընդառաջին, Սուրբ Զատկի տոնին կիրառվող բազմաթիվ

[36] Волчегорская Е.Ю. Художественно-эстетическое воспитание в начальной школе: лекция / Е.Ю. Волчегорская. – Челябинск: Изд-во Челяб. гос. пед ун-та, 2010, ст 29:

զարդարանքները, որոնք իրենց հերթին մեծ դեր են ունենում երեխայի գեղագիտական ճաշակի ձևավորման գործում: Հաշվի առնելով այս հանգամանքն ծնողներն պետք է մեծ ուշադրություն դարձնեն այդ ամենին և երեխաներին ներգրավեն այդ գործընթացների մեջ: Երեխան տեսնելով որ ծնողն գեղագիտական արժեք ներկայացնող զարդանախշերին տալիս է մեծ կարևորություն և այն կիրառում է ազգային տոների ընթացքում, կսկսի ինքն էլ հետաքրքրություն դրսևորել այդ ամենի նկատմամբ և կմեծանա ու դպրոց կգնա արդեն իսկ որոշակի գեղագիտական արժեքներ ունենալով: Իսկ դպրոցում ուսուցիչն այդ հիմքի վրա կսկսի դաստիարակել գեղագիտորեն զարգացած և ներդաշնակորեն մեծացող անձնավորություն:

2.2 Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները:

Փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ գեղագիտական դաստիարակության խնդրի տարբեր կողմերը բավականաչափ կարևորված են: Տարրական դպրոցում գեղագիտական դաստիարակության խնդիրները արտացոլված են բազմաթիվ գիտնականների հետազոտություններում:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները բազմազան են և բազմաբնույթ. Դրանց շարքին են դասվում.

- Կրտսեր դպրոցականների գեղագիտական ընկալումների ու ըմբռնումների ձևավորումն ու դաստիարակումը,
- Գեղագիտական դատողությունների ու մտածողության ձևավորումը,
- Գեղագիտական պատկերացումների ձևավորումն ու դաստիարակումը,
- Գեղագիտական զգացմունքների ու գնահատումների դաստիարակումը,
- Գեղագիտական ճաշակի դաստիարակումը,
- Գեղագիտական ինքնադաստիարակությունը և այլն:

Սրանք են գեղագիտական դաստիարակության ընդհանուր նպատակից բխող կոնկրետ խնդիրները: Կարևոր է որ երեխան ոչ միայն զգա, այլև հասկանա գեղեցիկը, կարողանա դատողություն անել նրա մասին: Այդ հարցում օգնում են գիտելիքները: Գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է զարգացնել երեխաների ստեղծագործական գեղարվեստական ընդունակությունները:

Նշված խնդիրների լուծումից է կախված սովորողների գեղագիտական դաստիարակության իրագործումը: Այս խնդիրները կարող են լուծել նախ և առաջ այն ուսուցիչները, ովքեր ունեն համապատասխան գիտելիքներ արվեստի տարբեր ձևերից ու ժանրերից: Գեղագիտական դաստիարակության որ բնագավառին էլ մոտենում ենք, կրկին հանգում ենք այն կետին, որ ուսուցիչն է տնօրինում, ուսուցիչն է որոշում ամեն ինչ:[37]

Այնուամենայնիվ, կան մի շարք չլուծված խնդիրներ: Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործընթացների և արվեստի տեսակների փոխազդեցության մեխանիզմների միջև հարաբերությունների բնույթը դեռ որոշված չէ: Մշակված չեն կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության մոդելն ու մանկավարժական պայմանները `դպրոցի ուսումնական գործընթացում արվեստի տեսակների փոխազդեցության հիման վրա: Ինչպես նախկինում, երեխաների գեղագիտական դաստիարակության խնդիրները լուծվում են մեկուսացված կերպարվեստի, երաժշտության, գրականության

[37] Աթայան Ռ.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան, 1974, էջ 182:

դասընթացներում՝առանց գեղարվեստական ճանաչողության անհատական խնդիրների, նոր տեխնոլոգիաների գեղագիտական զարգացման մոտեցումների դիտարկման:

Հասարակության մեջ շատ ուժեր են գործում, և գեղեցկությունը, արվեստը սոսկ մեկն է դրանցից: Գեղեցկությունն ընդունակ է «փրկելու աշխարհը», բայց այն դեպքում, երբ մյուս ուժերի հասարակականորեն խորտակիչ գործողություններն արմատից չեն ոչնչացնում այն ամենը, ինչ ստեղծում է արվեստը:[38]

Սովորողների գեղագիտական դաստիարակության գործում անգնահատելի է բնության դերը: Չէ որ բնության պատկերները միշտ թարմ են, բնական: Բնությունը ներգործում է երեխաների հոգու վրա, ազնվացնում նրանց գեղագիտական զգացմունքները, դիտունակությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու ունակությունները: Երեխայի համար նոր դպրոցական իրավիճակը դրդում է նրան գեղարվեստական գործունեության իմաստավորմանն ու նպատակաուղղվածությանը: Սակայն նրա հետաքրքրությունները շարունակում են մնալ կոնկրետ, մակերեսային ու ցրված: Նկարն ընկալելիս կրտսեր դպրոցականը ուշադրություն է դարձնում ամենից առաջ նրա վրա պատկերված դեպքին: Նրա ուշադրությունը սկսում են գրավել նկարի մանրամասները: Կրտսեր դպրոցականի հուզական ապրումը տարրական է և հիմնականում հանգում է պատկերվածի ըմբռնումից ստացած բավականության կամ անբավականության վերապրմանը: Կրտսեր դպրոցականի ուշադրությունը անկայուն է, նրան հոգնեցնում է արվեստի ստեղծագործությունների երկարատև ընկալումը և նույնիսկ արվեստով զբաղվելը: Դպրոցականների գեղագիտական դաստիարակության իրագործման **առաջին** ուղին՝

1.Գեղագիտական լուսավորությունն է /որը կարելի է իրականացնել արտադասարանային և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների ընթացքում/: Կարևոր նշանակություն ունենալ արվեստի վերաբերյալ գրքերի ընթերցանությունը, մեծատաղանդ արվեստագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, երաժշտության ունկնդրումը, վեպերի, վիպակներ, պատմվածքների, պոեմների, բանաստեղծությունների ընթերցանությունը, ներկայացումների, կինոնկարների դիտումները, դասական երաժշտության

[38] Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան ,1982, էջ 492:

սիստեմատիկաբար ունկնդրումը: Աշակերտները լսողի, դիտողի, ունկնդրողի դերում հանդես գալուց բացի, պետք է հանդես գան նաև ստեղծագործողի, կերտողի, կատարողի դերում: Դպրոցականների գեղագիտական լուսավորության իրականացմանը կարող են օգնել երեք՝ իրար փոխկապակցված օղակներ, գեղագիտական լուսավորության նոր ուղիները, գեղագիտական զգացմունքների ձևավորումը և գեղարվեստական գործունեության փորձի հարստացումը:[39]

2.**Գեղարվեստական գրականությունը** գեղագիտական դաստիարակության կարևորագույն աղբյուր է: Սա իրականությունը պատկերավոր ձևով արտացոլող ամենաառաջին ու նշանակալից տեսակներից մեկն է, որի հետ գործ ունի աճող մարդը: Կրտսեր դպրոցականների գեղագիտական զգացմունքները զարգանում են ուսուցչի ջերմ, կենդանի, անկեղծ խոսքի ազդեցության տակ, որը հմտորեն է օգտագործում առարկայի նկատմամբ հետաքրքրություն, գրականության նկատմամբ սեր արթնացնելու հնարների հարստությունը: Դպրոցի և ընտանիքի պատասխանատվությունը սովորողների ընթերցանությունը ղեկավարելու հարցում շատ մեծ է: Արտահայտիչ ընթերցանությունը դպրոցականի գեղագիտական ու գրական ճաշակի և գեղագիտական զգայունության դաստիարակության ուժեղ միջոցներից մեկն է:

3.Կերպարվեստը շատ վաղ է գեղագիտական դաստիարակության միջոց դառել: Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում բացառիկ դեր է վերապահված կերպարվեստ առարկային, որի դասավանդման ընթացքում գործնական կարողությունների և գեղարվեստական ընկալման հմտությունների ձեռք բերման շնորհիվ աշակերտներն առանձին հետաքրքրությամբ և սիրով են առնչվում արվեստ ստեղծագործություններին. նրանց մեջ զարգանում են ոչ միայն կերպարվեստի ստեղծագործություններում, այլ նաև արտաքին աշխարհում, շրջապատում գեղեցիկը նկատելու, զգալու և գնահատելու ունակություններ:

Կրտսեր դպրոցում կերպարվեստի դասավանդման գլխավոր նպատակը սովորողներին գույների համադրությանը, հարթապատկերային ձևերին ծանոթացնելն է, ինչպես նաև տարբեր նյութերով աշխատելու նրանց հմտությունները զարգացնելը: Առաջին դասարանից երեխաները սովորում են անվանել նկարելու

[39] Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 372:

համար ընտրված առարկաները, դրանց գույները, ծանոթանում են սառը և տաք գույներին, ինչպես նաև գուներանգներին: Այս ընթացքում ամրապնդվում են կերպարվեստի վերաբերյալ այն գիտելիքներն ու հմտությունները, որ երեխաներից շատերը ստացել են նախադպրոցական կրթության ժամանակ:

Երկրորդից չորրորդ դասարաններում ուսուցիչը շարունակում է զարգացնել աշակերտների կարողությունները՝ գունային ներդաշնակ զուգակցումներ ստեղծելու ուղղությամբ: Կերպարվեստի դասերն աշակերտներին մղում և օգնում են զգալու շրջապատող աշխարհի ամբողջ գունային հմայքը, հարստացնում են նրանց հոգեկան աշխարհը, զարգացնում գեղագիտական ճաշակը:

Կերպարվեստի դասավանդումը կրտսեր դպրոցում իրականացվում է դասերի չորս հիմնական տեսակների միջոցով՝

1) պատկերում բնօրինակից

2) զարդարարական (դեկորատիվ) նկարչություն

3) թեմատիկ նկարչություն

4) զրույցներ կերպարվեստի մասին:

Կերպարվեստի դասի 1-ին տեսակը ենթադրում է տարբեր առարկաների պատկերում, որոնք ուսուցողական աշխատանքներ են գծանկարից և գունանկարից: Ընդ որում՝ նկարվող պատկերը պետք է դրված լինի աշակերտների տեսահորիզոնից փոքր-ինչ ներքև: Փոքր չափերի մոդելները կարելի է բաժանել երեխաներին (ծաղիկներ, միջատներ, խորանարդներ և այլն):[40]

Այս դասերը նախապատրաստական փուլ են թեմատիկ և զարդարարական աշխատանքների համար:

Դասի 2-րդ տեսակը ենթադրում է ծանոթացում զարդա-կիրառական արվեստի յուրահատկություններին: Երեխաներն իրենց աշխատանքներն ազատ պատկերազարդում են՝ օգտվելով կիրառական արվեստի նմուշներից: Այս ընթացքում պետք է առանձնակի ուշադրություն դարձնել ազգային մշակույթի առանձնահատկություններին.

♦ նախշերի կատարում

---

[40]Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, «Մխիթար Գոշ», Գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 221:

♦ կիրառական արվեստի նմուշների պատկերազարդում

♦ շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում

♦ պատի թերթերի և վահանակների պատրաստում

♦ հեքիաթի կամ պատմվածքի ձևավորում:

Զարդարարական աշխատանքներն առավել արդյունավետ են առաջին դասարանում, քանի որ նպաստում են ձեռքի դաստակի մկանների զարգացմանը, ինչպես նաև գեղեցիկ ձեռագրի ձեռք բերմանը:

Դասի 3-րդ տեսակի՝ թեմատիկ աշխատանքների ժամանակ ամրապնդվում և կատարելագործվում են բնօրինակից պատկերման ժամանակ ձեռք բերված գիտելիքները՝ միաժամանակ երեխային տալով ազատություն, իրենց գիտելիքները, զգացմունքները թղթին հանձնելու հնարավորություն: Թեմատիկ նկարչությունը պետք է իրականացվի դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով:

Կերպարվեստի դասի 4-րդ տեսակը կոչված է օժանդակելու երեխաների համակողմանի զարգացմանը, ներաշխարհի հարստացմանը: Որպես հիմնական ուսումնասիրման նյութ՝ այս դասերի ժամանակ կարելի է ընդգրկել.

♦ զրույցներ գեղանկարչության՝ որպես կերպարվեստի տեսակներից մեկի մասին

♦ ծանոթություն հայ և արտասահմանյան նկարիչների աշխատանքներին

♦ մանկական գրքերի նկարազարդումներ

♦ հայկական մանրանկարներ, զարդա-կիրառական արվեստ:

Երեխայի ճանաչողական ու գեղարվեստական գործունեության արդեն առաջին քայլերը կապված են հեքիաթների ու բանաստեղծությունների՝ գրքերում տրված նկարազարդումները դիտելու հետ: Նկարչության դասերը դպրոցում նույնպես սովորողներին հաղորդում են տարրական կարողություններն ու հմտություններ, բայց արդեն որոշակի հետևողականությամբ օժանդակում է դպրոցականների ստեղծագործական ընդունակությունների զարգացումը, ծանոթացնում են նկարիչների ստեղծագործությանը և երգերի գնահատականին, սովորեցնում են ստացած գիտելիքներն ու հմտությունները կիրառել կյանքում:

Ցածր դասարաններում կերպարվեստի մասին արվող զրույցները կապված են երեխաների անմիջական շրջապատի հետ, նրանց ընկալման ու հասկանալու համար

մատչելի է դարձնում:

4.Երաժշտությունն ու երգը երեխաների կյանքի մեջ մտնելով նրանց ապրումների ու զգացմունքների արտահայտությունն են հանդիսանում, որի շնորհիվ նրանց հուզական փորձը ավելի հարուստ է դառնում: Երգի և երաժշտության պարապմունքները դպրոցում զարգացնում են երեխաների երաժշտական լսողությունը, երաժշտական հիշողությունը ու ճաշակը, զինում որոշ գիտելիքներով երաժշտության ու երգի բնագավառում, ծանոթացնում կոմպոզիտորների ստեղծագործություններին, երաժշտական արվեստի ուղղություններին ու ժանրերին:

Երեխայի երաժշտական կուլտուրայի աճը և նրա երաժշտական ընդունակությունների զարգացումը անհամեմատ արագ է ընթանում, եթե ընտանիքում ու դպրոցում այդ ուղղությամբ հատուկ ուշադրություն են դարձնում երեխաների երաժշտական կատարողական ստեղծագործության զարգացումը համարվում է գեղագիտական դաստիարակության ողջ համակարգի անքակտելի մասը:[41]

Ազգային երաժշտության հետ շփումը հարստացնում է երեխայի ներաշխարհը, առավել ամբողջական դարձնում նրա պատկերացումները գեղեցիկի, վեհի, կատարյալի վերաբերյալ, ի վերջո՝ ձևավորում է նրա բարոյական կերպարը: Երաժշտության ուսուցիչը պետք է հոգ տանի դասարանի երաժշտական գրադարանը ազգային մանկական երգերի ձայներիզներով համալրելու մասին:[42]

5.**Թատերական արվեստը** սովորողների գեղագիտական դաստիարակության մեջ հատուկ դեր է խաղում: Դերասանի խաղը ստեղծում է կենդանի, երեխայի հիշողության մեջ մնացող կերպար, իսկ արվեստի մյուս տեսակները, որ օրգանապես հյուսվում են ներկայացմանը, ուժեղացնում են ներկայացումից ստացված տպավորությունը ամբողջությամբ: Առաջին էտապը կախված է ընկալման նախապատրաստման հետ: Թատրոն հաճախելը գրեթե միշտ ուրախ իրադարձություն է դպրոցականի կյանքում: Կրտսեր դպրոցականների հետ ավելի շատ ուշադրություն է հատկացվում ներկայացման կերպարների նկատմամբ ճիշտ

---

[41] Педагогика, курс лекций, Ереван 1969г., ст 634:

[42]Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 220:

վերաբերմունք ձևավորելուն, որ զգալի չափով կապված է հերոսների բեմում տեղի ունեցող իրադարձությունների բարոյական նահատակի հետ:[43]

Ներկայացման քննարկումը հաճախ անջնջելի տպավորություն է թողնում: Դպրոցականը կրկին ու կրկին ապրում է տեսածը, նրանք շարադրություններ, գրախոսություններ են գրում, առանձին տեսարանների նկարազարդումներ են կատարում, իսկ ամենակարևորը՝ վերաիմաստավորում են իրենց արարքները, վերաբերմունքը մարդկանց նկատմամբ: Բեմականացումը գրավում է բոլոր դպրոցականներին՝ առաջինից մինչ ավարտական դասարանը, և դա շատ կարևոր է, քանի որ վերամարմնավորելու, կերպար ստեղծելու արվեստը զարգանում է ստեղծագործական երևակայությունը, օժանդակում է մարդկանց զգացմունքները իմաստավորելուն և վերլուծությանը: Փոքրերի ու դեռահասների հետ տարվող աշխատանքում հնարավոր է դասարաններում ստեղծել ժամանակավոր թատերական խմբեր՝ բեմադրության վերածված միջադեպերը բեմադրելու համար:

Գեղագիտական դաստիարակության մեթոդներն են՝ գեղագիտական թեմաներով զրույցները, նկարազարդման, բացատրության, համեմատության, համդրության, արվեստի երկերի, առարկաների ու երևույթների վերլուծության, վարժություններն արվեստում (երաժշտության ունկնդրում, երաժշտական գործիքներ նվագել, նկարչություն և այլն) և այլ մեթոդներ:

Տվյալ մեթոդների և միջոցների կիրառմամբ էլ կարելի է իրականացնել գեղագիտական դաստիրակությունը տարրական դպրոցում.

- Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը ուսումնական պրոցեսում,
- Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը արտադասարանական և արտադպրոցական աշխատանքում,
- Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը գեղարվեստական խմբակների, մրջոցառումների, բեմականացված խաղերի միջոցով,
- Աշակերտների գեղագիտական և գեղարվեստական ինքնակրթության և ինքնադաստիարակության միջոցով,

[43] Педагогика, курс лекций, Ереван 1969г., ст 636:

- Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը երաժտության, նկարչության դասերին:

Սովորողների գեղագիտական դաստիարակության կարևոր ուղիներից կամ մեթոդներից են բացատրությունը, վերլուծությունը, գեղագիտական խնդիրների լուծումը, վարժությունները, դասախոսությունները, բանավեճը, ինքնահաղթահարումը, ինքնաներշնչումը, ինքնահամոզումը, ինքնաընտելացումը, ինքնատիրապետումը: Երեխայի միջավայրի գործոններից մեկն էլ բնությունն է: Դպրոցի կարևոր խնդիրներից մեկը երեխայի մեջ բնության նկատմամբ սեր արթնացնելն է, բնությունը պահպանելու և խնայելու ունակություններ ձևավորելը:[44]

Այսպիսով՝ դաստիարակության շատ այլ բնագավառների նման՝ երեխայի գեղագիտական դաստիարակությունը ևս պետք է սկսել ամենավաղ տարիքից, այն հասակից, երբ նա սկսում է աշխարհը տեսնել յուրատեսակ գեղադիտակի միջից՝ իմաստավորելով և հստակ տարանջատելով գեղեցիկը տգեղից, վեհը նսեմից: Գեղագիտական բնականոն դաստիարակությունը բարեհաջող լրումին է հասցնում դաստիարակչական ողջ գործընթացը, երեխայի աշխարհայացքի համակողմանի ձևավորումն ու ներդաշնակ զարգացումը: [45]

Տարրական դպրոցում համակողմանիորեն զարգացած անձի ձևավորման համար լուրջ դերակատարում է վեհապահված «Տեխնոլոգիա» առարկային: «Տեխնոլոգիա» առարկան միայն գեզագիտական դաստիարակության միջոց չէ, այն երեխայի բազմակողմանի զարգացման հիմքն է, գեղագիտական, բարոյական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության գործուն միջոց:

Հանրակրթության պետական չափորոշչով «Տեխնոլոգիա» առարկան ուսումնասիրվում է 1-6-րդ դասարաններում: 7-12 դասարաններում այն կարող է ներկայացվել ‹Արվեստ և արհեստ› ոլորտի մեկ ինտեգրված առարկայով: Առարկայի բովանդակությունը կառուցվում է 5 հիմնարար գաղափարների վրա՝ գծային սկզբունքով: Չորրորդ դասարանից սկսվում է ծանոթացումը գծագրական պարզ գործիքներին, հայկական գեղարվեստական արհեստներին, դեկորատիվ-

[44]Թոփուզյան Ա., Միջավայրի հումանացումը որպես երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչ, «Մանկավարժություն», էջ 211/ http://kantegh.asj-oa.am/1115/1/211-225.pdf

[45]Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 223:

կիրառական արվեստին, հայկական զարդանախշերի իմաստային ու գաղափարական բովանդակությանը: Հիմք ընդունելով այս ամենն հետազոտություն կանցկացնենք տարրական դպրոցում՝ կախված հայ ազգային զարդանախշերի ներկայիս կիրառության հետ, կպարզենք որքանով այն կնպաստի կրտսեր դպրոցականների գեղագիտական զարգացմանը և ինչ դեր ունի այս գործում ընտանիքը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված տեսական ուսումնասիրությունների և սոցիոլոգիական հարցումների վերլուծության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացության.

- Աճող սերնդի դաստիրակության և սոցիալականացման գործում մեծ ու անփոխարինելի է ընտանիքի դերը: Ընտանիքն իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ՝ վերարտադրողական, տնտեսական, դաստիարակչական, սոցիալականացման, հաղորդակցման, ինչպես նաև ժամանակի կազմակերպման: Ընտանիքը անհատին ձևավորման սոցիալականացնող առաջնային միջավայրն է:

- Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքում, և՛ դպրոցում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն այդ տեսակետից անփոխարինել է դպրոց-ընտանիք համագործակցության կազմակերպումը:

- Գեղագիտական կրթություն ու դաստիարակությունն երկարատև գործընթաց է, այն սկսվում է ընտանիքում, շարունակվում դպրոցում, այնուհետև ամբողջ կյանքում, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է որպեսզի և՛ ուսուցիչները, և՛ ծնողները հաշվի առնեն այդ հանգամանքն՝ երեխայի գեղագիտական կրթությանն լիարժեք ընթացք տալու համար: Ընտանիք-դպրոց համագործակցությունն մեծ դեր ու նշանակություն ունի կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության կազմակերպման գործընթացում:

- Կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ միջավայրը մեծ ազդեցություն է ունենում ընտանիք-դպրոց համագործակցության մեջ, որն էլ անդրադառնում է երեխայի գեղագիտական դաստիարակության ձևավորման վրա:
- Միջոցառումների և էքսկուրսիաների հաճախակի կազմակերպումը, կիտոթատրոններ, տիկնիկայիններ և պատկերասրահներ ծնողների հետ համատեղ այցելությունն մեծ նշանակություն ունի գեղագիտորեն զարգացած սերունդ ունենալու համար: Իսկ տան գեղեցիկ կահավորումը, ազգային զարդանախշերի կիրառությունն և պապիկ-տատիկների երգած երգերն ընտանիքում ձևավորում են գեղարվեստական պատկերացումներ կրտսեր դպրոցականների մոտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Ռ.Ա.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան,1974:
2. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 369:
3. Աշիկյան Ա., Ընտանիքը երեխայի անձի ձևավորման և զարգացման սոցիալ-մշակութային միջավայր, «Պատմություն և միջավայր», հայագիտական հանդես, Երևան, 2016, 543 էջ:
4. Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982, էջ 492:
5. Դալաքյան Ա.Հ., Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը ժամանակակից դպրոցում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 111-117:
6. Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 216-224:
7. Թոփուզյան Ա., Միջավայրի հումանացումը որպես երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչ, «Մանկավարժություն», էջ 211-225 / http://kantegh.asj-oa.am/1115/1/211-225.pdf:
8. Թովմասյան Լ., Ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա, «Նախաշավիղ» 5.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 57-59:

9. Խոջոյան Լ., Ընտանիք-դպրոց-համագործակցություն, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 1.2017, էջ 56-61:

10. Հովսեփյան Վ.Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Երևան, 1979, էջ 20:

11. Ղուկասյան Լ.Հ.,Դպրոց-ընտանիք համագործակցության ուղիները հանրակրթության պայմաններում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 195-199:

12. Մանկավարժական ընթերցումներ, «Դպրոցը, մանկապարտեզը և ընտանիքը», Երևան, 1961, էջ 112:

13. Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, 333 էջ:

14. Մարկոսյան Ն.Ռ., Ժամանակակից ընտանիքների արժեհամակարգը և դրա ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 205-210:

15. Միքայելյան Հ., Գեղագիտական դաստիարակությունը և մաթեմատիկական կրթությունը, Մաթեմատիկան դպրոցում, ամսագիր, թիվ 4.2016, էջ 3-17:

16. Մովսիսյան Ս.Ա., Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան 1980, էջ 170 «Ընտանիք» ինստիտուտի հետազոտություն, Երևան, 2006:

17. Ներսիսյան Լ. Ս., Կրթություն և գեղագիտություն, Եր., 2002,– 152 էջ:

18. Ջանիկյան Ս., Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում, ‹‹Նախաշավիղ›› 7.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 46-51:

19. Սիսյան Ս.Բ., Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրտսեր դպրոցականների քաղաքացիական որակների դաստիարակության գործում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 316-321:

20. Սվաջյան Արաքսյա, Ծնողների մասնակցությունը երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստման գործընթացին, «Ընտանիք և դպրոց», Գիտամեթոդական ամսագիր, 4.2010, էջ 19:

21. Վարդանյան Ռ.Ա., Դպրոց-ընտանիք համագործակցության միջոցները տարրական դպրոցում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 321-326:

22. Տիգրանյան Լ., Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, ‹‹Նախաշավիղ›› Գիտամեթոդական հանդես, 4.2012, էջ 59-63:

23. Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացի ուսումնական նյութերի փաթեթ: